Արձանագրություն N 2

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պարզաբանում ներկայացնելու մասին նիստի

ք. Երևան «11» հուլիս 2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Աղաջանյան – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱՊ

Հանձնաժողովի անդամներ

Հ. Ջաղինյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Մ. Սահակյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության առաջատար մասնագետ ԳՊ/ԲԱ

Գ. Մեհրաբյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության առաջատար մասնագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Լ. Սահակյան՝ ՀՀ ՖՆ գնումների գործընթացի կազմակերպման բաժնի առաջատար մասնագետ

Բացակայում է

Ի. Քոչարյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության առաջատար մասնագետ ԳՊ/ԳԱ

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատելու և ներկայացնելու հրավերի վերաբերյալ պարզաբանումը
2. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Ընթացակարգի հրավերի վերաբերյալ պարզաբանման մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում

Որոշեց.

1. հաստատել և տրամադրել «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2019 թվականի հուլիսի 9-ին ստացված հարցման վերաբերյալ պարզաբանումը /կցվում է/

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

2.1 «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2019թ հուլիսի 15-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Աղաջանյան**

հանձնաժողովի անդամներ՝ _____ **Հ. Ջաղինյան**

_____ **Մ. Սահակյան**

_____ **Գ. Մեհրաբյան**

Գնումները համակարգող՝ _____ **Լ. Սահակյան**

Հարցադրում

Հարգելի գնահատող հանձնաժողով,
խնդրում ենք տրամադրել պարզաբանումներ հետևյալ հարցերի շուրջ՝

1.ՀՀ ՖՆ կարիքների համար ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում Աշխատանքային ռեսուրսներին վերաբերվող կետում նշված է, որ դասավանդողը պետք է ունենա պետական կառավարման համակարգում հանրային ֆինանսների բնագավառին վերաբերող ոլորտներում վերջին հինգ տարում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ:
Արդյոք ՊՈԱԿ-ները, հիմնադրամները, կոմիտեները, ԾԻԳ-երը և Բողոքարկման խորհուրդը /մասնավորապես Բողոքը քննող անձանց խորհրդականները/ համարվում են ընթացակարգի պահանջներին համապատասխան պետական կառավարման համակարգում հանրային ֆինանսների բնագավառին վերաբերող ոլորտի ներկայացուցիչներ:

2. Ինչպես նաև, դասավանդողը պետք է ունենա ,Գնումների մասինն ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերում ներգրավված անձանց համար վերապատրաստման առնվազն 3 դասընթացների վարման փորձառություն: Խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին՝
ա/ Արդյոք դասավանդողը կարող է ներկայացնել նույն թեմայով և նույն կազմակերպության կողմից անցկացրած Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերի վերաբերյալ 3 դասընթացի փորձառություն:
բ/ Արդյոք Հանրային հատվածի ներքին աուդիտորների համար կազմակերպված Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերի վերաբերյալ դասընթացները կհամարվեն բավարար:

Պարզաբանում

1.Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինները: Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա մարմինների ցանկը սպառիչ թվարկված է 23.03.2018թ. թիվ 260-Ն «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածներով:

ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/20 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում աշխատանքային ռեսուրսներին վերաբերող պահանջներին կարող են բավարարել նշված մարմիններում հանրային ֆինանսների բնագավառին վերաբերող ոլորտներում վերջին 5 տարում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ ունեցող աշխատակիցները:

2. Նույն թեմայով նույն կազմակերպության կողմից անցկացված թվով 3 դասընթացների վարման փորձառությունը կհամարվի բավարար, եթե դրանց շրջանակներում վերապատրաստումներն իրականացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գնման ընթացակարգերում ներգրավված անձանց (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարի 17/02/2012թ. թիվ 143-Ն հրամանի 23.1 կետով սահմանված պահանջի կատարման գործընթացում ներգրավված ներքին աուդիտորների) համար՝ վերջին երկու տարիների ընթացքում: